

հաշուել 365,000 Գըզըլ-պաշ . էրզրումի մէջ 107,000 , Խարբերդի մէջ հաւանականարար 300,000 : Ասկէ զատ գիտեմ թէ խիստ շատ տարածուած են Սամանի շրջակայքը . Գաղատիոյ նահանգին մէջ եւ քանի մը մօտակայ տեղեր :

Գըզըլ-պաշներու վրայ ստացած այս տեղեկութիւններու , զոր բաւական դժուարութեամբ ձեռք կրցի բերել . շատ անկատար են տակաւին . բայց կրնան ընդհանուր գաղափար մը տալ այս հետաքրքրաշարժ աղանդին վրայ . եւ կը հաւատամ թէ ապագայ հետազօտութիւնները շատ պիտի դիւրանան ասոնցմով :      Թարգմ. Մ. Յ. ԳէՐՊԵՐԵԱՆ



### ՈՈՒՍՈՀԱՅ ՆՈՐԱԴՈՅՆ ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Ո Ն Ո Փ Ր Ի Ո Ս Ա Ն Ո Փ Ե Ա Ն

Բնիկ Նոր-Նախիջեւանցի ծնուել է նոյն քաղաքում 1873 թ. նոյ. 15-ին : Հայրը Խրիմի Բաղչեսարայ քաղաքից , իսկ մայրը Թէոդոսիայից , երկուսն էլ այժմ վախճանուած Սկզբնական կրթութիւնը առել է հօրից եւ եօթ տարեկան հասակում մտել է Ռուսով քաղաքի այն ժամանակուայ Բաշխնիկու պանսիոնը . մի տարի անցնելուց յետոյ 1882 թուին հայրը տալիս է նրան Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ վիճակի նորահաստատ թեմական դպրոցը . որտեղ մնացել է մինչեւ 1892 թ . Չորրորդ գասարանում աշակերտած ժամանակ , սէր զգալով դէպի գրականութիւնը . սկսում է ձեռք զարկել հրատարակելու մի ուսանողական թերթ «Շաւիդ» անունով : Գրականութեան ճիշգերից ամենից շատ Անոփեանը սկրել է բանաստեղծութիւնը եւ մի առանձին սիրով միշտ կարգացել է նամանաւանդ այս ընտիր բանաստեղծների երկերը՝ Դուրեան , Պեշիկթաշլեան , Նազսօն , Լերմոնտով , Հայնէ եւ յայտնի իտալացի կին բանաստեղծ Ադանեգրի :

1895 թ . նա ենթարկվում է զինուորակոչի եւ ծառայութեան է մասնում Առաջին Կովկասեան Հրացանաձիգ զօրաբաժինը Թիֆլիսում . թէպէտ Ռուսահայոց այդ մուաւոր կենտրոնում ապրելը շատ գուը է գտնիունուինքնին . բայց տանելով երկու տարուայ ընթացքում զինուորական սահմանափակ կեանքի ծառայութեան ամէն ծանրութիւնները զինուոր լինելու պատճառով՝ նա միջոց եւ հնարաւոր ւթիւն չէ ունենում զրազուելու գրական գործերով , այսինքն վոյքը ի շատէ շփուելու

զրական շրջանների հետ եւ աշխատակցելու տեղային հայ թերթերին, Պարփակուած եւ սղմուած այդպիսի աննպաստ պայմանների մէջ, պաշտօնը եւ միջավայրը նրան թոյլ չէին տալիս աւելի բանաստեղծութիւններ գլուխ:

Վերջապէս 1833 թ.-յունուարի 1ին լրանալով զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը՝ Անոփեան արձակվում է ծառայութիւնից պահեստի զօրքի ենթասպայի աստիճանով: Այնուհետեւ, Տագանրոգում երթք արի մի զործարանի մէջ ծառայութեան տեղից՝ վերադառնում է Նոր-Նախիջևնի եւ պաշտօն է ստանում Ազգ-Դօնի առեւտրքական բանկի Ռուսովիլի բաժանմունքում: ուր եւ մնում է մինչեւ ներկայ րոպէն, ընտանիք պահելու ամբողջ հոգու իր վրայ ունենալով:

Անոփեանը զեր աշակերտական նստարանից սկսել է զրել սուանաւորներ: Առաջինը «Զմեռ» վերնազրով տպագրուեց Վիէննայի Թիֆլիսարեանց Հանգէս Ամսալեայցում ինսնական թուականների սկզբին: Նոյն թերթի էջերում զետեղել է եւ ուրիշ բանաստեղծութիւններ եւ թարգմանել ուստ ցշապետ Ն Մաոի մի ուսումնասիրութիւնը որ կրում է Ա. մառնային ու զեւորութիւնից դէպի Հայո» վերնագիրը: Այ թարգմանութիւնը յետոյ առանձին զրքով լոյս ընծայուեց 1892 թուին նոյն Մխիթարեանների ձեւով, որ կազմում է Ազգային Մատենադարանի մի հատորիկը: Անոփեան աշխ ստակցել է ռԱրաքս, Աղդրիւր Հանգէսներին, մինչեւ օրս էլ չարունակում է աշխատակցել մանաւանդ Հարազ» շաբաթաթերթիւն: ունի տպադրած մի ուսանաւոր — «Մի՛ Երկիր»: Ճինազ Պուշկիննեան Ժողովածուի մէջ եւ վեց հատ նոր ուսանաւորներ մեր խմբագրութեամբ հրատարակուող «Զգացմունք» վեց ամսեաց Հանգէսի առաջին զրքում: Թարգմանած ունի Պուշկինի «Բախչիսարայսկու Փանոսն» պօէման, Աղամ Միցելիսի «Խրիմի Հնչեակիները» եւ նոյնուու ուրիշ գ'ուան ուիզ զրուածքներ:

Ցաւեռվ պիտի ասեմ, որ Ան փեանը չունի ուսանաւորների ժողովածու զիրք առանձին հատորով: Որովհետեւ զիրքն է, որ չէ մոռացվում, ուստի խորհուրդ կըտամ պ Անոփեանին իր ուսանաւորները մի տեղ ժողովելու եւ հրատարակելու: Դրանով ընթերցողները հնարաւորութիւն կունենան կարդուու: եւ նրանց յստիլութիւնների մասին զազափար կազմելու: Ես պ այտօնիս պարտականութեան շնորհիւ, կարգացել եւ Անոփեանի բոլոր ուսանաւորները՝ զրտ ան հանգէսներում: Ես դասայ Անոին անին միջակ բանս ստեղծ: թէ՛ւ ունի գեղ սրուեւում ան շնորհ, ախուս միջայն մի առանձին ընթառութիւն չէ ուրց տալիս այդ շնորհը որուայացելու բանաստեղծական բարձր թուիչների ելեւ էջների միջոցով: Միտքը ուսանաւորների էջերում՝ կարծես տեղ տեղ քնառ թերայ է հիշտ գետաղի մուլմ քլքլոցի այն ձայնի նման: որ

հազիւ թէ լսելի է լինում ականջին, սաոցէ շզթաների տակ կաշկանդուած։ Պէտք է փշը լիսորտակել այդ սաոցէ կապանքները, եւ ափերից զուրութործունէութեան ազատ սրավազ հոսանքներ առաջացնել և Արդեօք այդ յանգինութիւնը կունենա՞յ Անոփեանը, իշխ կարողանա՞յ բարձր թոփէքների լոյն թեւերի վրայ հեռու սաւառնել եւ հեղեղել այնտեղ երգերի եռուն ալիքներ, գեղեցկապիտական խոր մտքերի ու զգացմունքների ծով-աշխարհ ներկայացնել, — այդ գեռ հարց է քողով ծածկուած ապադայի համար, իսկ այժմ մի քանի նրա յաջող ոտանաւորները տրամադրում են մեզ դէպի շարժուող առաջադիմութիւն, դէպի լաւը յուշալ։ Ահա՝ մի նմուշ «Մովի վիշտը» (տե՛ս «Տարազ» N 2, 1900 թ) յ ոտանաւորից։

Կանգնած էի ես ծովի եղերքին . . .  
 Արդէն վառ արփին լուս մայր էր մտնում  
 Եւ անհուն ծովի թախծալի դէմքին  
 Իր շիկակարմիր շողերն էր ցանում . . .  
 Եւ վերջալոյսի համբոյրից խովված,  
 Լաց էին լինում կապոյտ կոհակներ . . .  
 Եւ խո՞ր, համասփի՞ւռ վշտից տոչորուած,  
 Ափն էին ձըդում ճերմակ փրփուրներ . . .  
 Հեծում էր քամին . . . լուս եւ անխըռո՞վ  
 Խոժու երկնքից իջնում էր զիշեր . . .  
 Եւ մեծ տարերքի թախծոս օրօրով  
 Քուն էին մտնում մտազրազ լեռներ . . .  
 Եւ ծովը սրտից խրոխտ ու դառնալիր  
 Իր վիշտն էր ժայթքում ու տխուր լալիս . . .  
 Բայց նըրան միայն ժայռն էր ունկնդիր . . .  
 Որ ծովեղերքին սեւին էր տալիս . . .

Այս ոտանաւորի մէջ նկատելի է անկեղծ զգացուան տրամադրութիւն եւ արտայայտման շնորհալի ձեւ։ Այս տեսակ գեղարուեսատական ոտանաւորներ ունի Անոփեանը, պօէզիայում նա կարող է ապագայ ուսնենալ, եթէ աշխատէ արդիւնաւորել անխոնջ կերպով իր բանաստեղծական գրիչը՝ վառ երեւակայութեան, խանգուտ աւիւնի եւ նշմարիտներին դաշտափար արտայայտող ազդու տպաւորութիւնների ներս դաշնակութեան տակ . . .